

բար շատ անվայելուչ տպագրութեամբ:

Այս երկու նմոշները բոլորովին կը տարբերին Մահտ. Մարտիրոս Գաբրի տը պարանէն ասկէ առաջ հրատարակուած փորագրեալ պատկերներէն: Մարտիրոս դպրի տպարանը յաճախ գործածած է ընդօրինակեալ փորագրութիւններ Ոսկանի Աստուածաշունչի պատկերներէն, սակայն ընդօրինակիչը մնացած է անանուն:

Գարձեալ փայտափորագրիչ մը եղած ըլլալու է Սրմաքէշ Մանուէլ Կեսարեան: Օրինակ, 1781ին Կ. Պոլիս հրատարակուած տարեցոյցի մը փայտափորագիր պատկերներէն ոմանց մէջ կայ բոլորգիր ՄԿ մը:

\*  
\*\*

Յուսամ թէ ակնարկովս կրցայ ցոյց տալ որ բաւական հետաքրքրական նիւթ կայ մեր փայտափորագրական պատմութեան մէջ, որ միեւնոյն ատեն մեր գեղարուեստի պատմութեան մէկ կարեւոր էջը կը կազմէ, ուր մանաւանդ ժԲ դարուն


խտացուած է Հայ գարդարուեստի զարգացման կամ անկման շրջանը, ուր նաեւ խտացած է Հայ մանրանկարչական հասկացողութեան աստիճանը:

Անտարակոյս թէ մենք չենք ունեցած փայտափորագրական այնպիսի արուեստ և արհեստ մը որ արդար պիտի ըլլար ակնկալել Հայ տպագրութեան այդքան հին ծագման գոյութեան համար իսկ: Մենք իրապէս ետ մնացած ենք մեր գրքերը պատկերագործելու ճաշակին մէջ, այսինքն տպագրեալ գրքերը: Գրեթէ չկան Հայ հրատարակութիւններ, նոյն իսկ այժմեան ժամանակներէն, որոնք պատկերագարդուած ըլլան կարող Հայ մանրանկարիչներէ կամ գծագրիչներէ: Այդ տեսակէն չենք կրնար հպարտանալ, թէ եւ ունեցած ենք Էտկար Շահինի, Բօլատի, Աղամեանի և ասոնց նման միջազգային համբաւ վայելող զիրք պատկերագարողներ, այլ ատոնք բնաւ չեն նպաստած Հայ տպագրական արուեստի պատկերագորդ ճիւղին: Պատճառը:

Ատիկա դժբախտաբար շատ որոշ է: Հայ



թ. 27. Տոնացոյց 1774ի, էջ 76.



թ. 28. Ժողովածու 1710իմ, էջ 182.